ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0009, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00374 10) 511-771 www.court.am

ԴԴ -1 Հ-1025

« 30 » դեկտեմբերի 2025թ.

«ԱՐԼԻՎԱՉ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Բ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Վանաձոր, Վարդանանց 122)

Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան,

Դատական դեպարտամենտի և «ԱՐԼԻՎԱՉ» ՍՊԸ-ի միջև 08.10.2025թ. կնքված N ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/16-3 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում 04.11.2025թ. կնքված N 1 համաձայնագրով ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 2025թ. դեկտեմբերի 22-ը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 29.12.2025թ. Ձեր կողմից մատակարարված փաստաթղթերի պահման պահարանները չեն համապատասխանում Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին, հայտնում ենք, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի «ա» պարբերությունը (այն է՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը. Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում) Դատական դեպարտամենտը միակողմանի ամբողջությամբ լուծում է Պայմանագիրը:

Այս կապակցությամբ տեղեկացնում ենք, որ.

- «ԱՐԼԻՎԱՉ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900005028106 գանձապետական հաշվին ուշացված հինգ աշխատանքային օրվա համար փոխանցել 17,993 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետ) և 35,986 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետ)՝ վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնելով Դատական դեպարտամենտ,

- մինչև 2026թ.-ի հունվարի 9-ը պայմանագրի ու որակավորման ապահովման գումարները (համապատասխանաբար՝ 720,000 ՀՀ դրամ և 1,080,000 ՀՀ դրամ) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված համապատասխանաբար 900005000758 և 900008000664 գանձապետական հաշիվներին փոխանցելու դեպքում «ԱՐԼԻՎԱՉ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (վճարումը հավաստող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել Դատական դեպարտամենտ),

- տույժերի, տուգանքների և ապահովումների գումարները վերը նշված ժամկետներում չվճարելու դեպքում Դատական դեպարտամենտը կձեռնարկի միջոցներ՝ դրանք գանձելու ուղղությամբ:

Հարգանքով՝

ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Կապ՝. Նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչություն
Հեռ.՝ (+37410) 511-777, 511-812